ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թորոսյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Մարտիրոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Ներկայացված օրենքի նախագծով առաջարկվում է ավելացված արժեքի հարկից ազատել դեղամիջոցների, դեղանյութերի, պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած ցանկում ընդգրկված սննդային հավելումների և դեղաբուսական հումքի իրացումը: Նախագծի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորվում է դեղերի բարձր գներով և կեղծ դեղերի շրջանառութան առկայությամբ:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում նշել, որ՝

1) նոր հարկային արտոնությունների սահմանումը չի բխում 2008 թվականի ապրիլի 30-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրից, որով ամրագրվել է արտոնությունների առավելագույն կրճատման, առանձին ոլորտների, գործունեության առանձին տեսակների, առանձին ձեռնարկությունների համար որևէ բնույթի հարկային արտոնությունների բացառումը (Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի 4.3.5-րդ կետի («Հարկային և մաքսային համակարգեր») «գ» ենթակետ).

2) դեղամիջոցների իրացման շրջանառությունն ավելացված արժեքի հարկից ազատելն էական ազդեցություն չի ունենա դեղամիջոցների գների նվազեցման վրա, ինչը հիմնավորվում է ավելացված արժեքի հարկի հաշվարկման մեխանիզմով: Այսպես, եթե դեղերի ներմուծումը կամ դրանց արտադրության համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերումը հարկվում է ավելացված արժեքի հարկով, իսկ պատրաստի դեղերի իրացումն ազատվում ավելացված արժեքի հարկից, ապա արդյունքում դեղերի ներմուծման ժամանակ մաքսային մարմիններին, իսկ դեղերի արտադրության դեպքում՝ մատակարարներին վճարված ավելացված արժեքի հարկի գումարները միացվում են այդ ապրանքների արժեքին և, հետևաբար, դրանց իրացման համար ավելացված արժեքի հարկի արտոնության տրամադրումը գրեթե չի հանգեցնի դեղամիջոցների վերջնական իրացման գների նվազեցմանը: Ավելաց-

ված արժեքի հարկի գծով արտոնությունների կիրառման փորձը ցույց է տալիս, որ արտոնությունների տրամադրումը, որպես կանոն, չի հանգեցնում ապրանքների կամ ծառայությունների գների նվազեցմանը: Դրա վառ օրինակ է ուսման վարձի գծով ավելացված արժեքի հարկից ազատելու արտոնության տրամադրումը.

3) իրատեսական չէ նաև ավելացված արժեքի հարկից ազատելու արտոնության տրամադրումը որպես կեղծված, կասկածելի ծագում և ցածր որակ ունեցող դեղերի և դեղահումքի ապօրինի ներկրման դեմ պայքարի միջոց դիտարկելը, քանի որ այդ խնդիրը լուծվում է այլ մեխանիզմներով: Մասնավորապես, «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի համաձայն, դեղերի և դեղանյութերի ներմուծումը, արտահանումը և արտադրությունը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ են: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք կարող են ներմուծվել միայն Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերը և դեղանյութերը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի «Հայաստանի Հանրապետության դեղերի և դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգը հաստատելու մասին» N 347 որոշման՝

ա. 5-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը հայտարարատուի կողմից ներկայացվող հայտի հիման վրա դեղերի ներմուծման կամ արտահանման հավաստագիր է տրամադրում հայտարարատուին,

բ. 9-րդ կետի համաձայն՝ դեղերի ներմուծման կամ արտահանման հավաստագիրը տրվում է դեղերի որակական ցուցանիշների լաբորատոր և փաստաթղթային ստուգման հիման վրա:

Նշված կարգով սահմանված են նաև դեղերի ներմուծման ու արտահանման մի շարք այլ չափանիշներ: Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բավարար կարգավորված է կեղծված, կասկածելի ծագում և ցածր որակ ունեցող դեղերի ու դեղահումքի ապօրինի ներկրումը կանխելու վերաբերյալ հարցը:

Օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորվում է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 34-րդ հոդվածում ամրագրված այն դրույթով, որ յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրավունք: Այս սահմանադրական նորմից չի հետևում, որ դեղերի իրացումը կամ առողջապահության ոլորտում ծառայությունների մատուցումը պետք է ազատվի ավելացված արժեքի հարկից կամ լինի անվճար:

Հայաստանի Հանրապետություն ներմուծվող դեղերի և սննդային հավելումների իրացումն ավելացված արժեքի հարկից ազատելն այդ ապրանքների 2007 թվականի ներմուծման ծավալների պահպանման պայմաններում կհանգեցնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամտային մասի ավելի քան 1.0 մլրդ դրամի կորստի, իսկ 2008 թվականի առաջին հինգ ամսում ներմուծման ծավալների հաշվարկով կատարված նախնական գնահատմամբ՝ շուրջ 650.0 մլն դրամի կորստի: Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն կկրի եկամուտների էական

կորուստներ և, հետևաբար, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան, այն պետք է ընդունվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Տ. Դավթյանը:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 15-ի 19-րդ կետում «մայրական կաթի,» բառերից հետո ավելացնել ««դեղամիջոցների, դեղանյութերի, պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած ցանկում ընդգրկված սննդային հավելումների, դեղաբուսական հումքի,» բառերը, այնուհետեւ՝ ըստ տեքստի:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Թորոսյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորներ Արծվիկ Մինասյանի և Շիրակ Թորոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, օրենսդրական նախաձեռնության կարգով, 2008 թվականի հուլիսի 10-ի N 02/31/881-08 գրությամբ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նույնաբովանդակ նախագիծ:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 6-ի մաքսային օրենսգրքի 111-րդ հոդվածը լրացնել նոր կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ե) ֆիզիկական անձանց պատկանող, Հայաստանի Հանրապետությունում հաշվառված և Հայաստանի Հանրապետության ցամաքային մաքսային սահմանը հատող տրանսպորտային միջոցները:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: